

հուրսը ժողովուրդը խոնուած էր՝ տեղապահը վար առնելու առաջադրութեամբ : Ետանկըու աղ անցքին անտեղեակ՝ կը դիմէ Գաժաֆեանի, եղևուքեան հասու ըլլալու համար : «Պօլսահայք ազգային տասերը յեղաշրջելու գաղափարնիդ իմացած ըլլալով՝ ձեզ կը փնտռու կոր, բզկինիդ հանեն պիտի . . . » կը պատասխանէ Գաժաֆեան հեգնօրէն : Ռումանանայուն՝ գլխարկն առնելով կծիկը դնելը մէկ կ'ըլլայ : — Գաժաֆեան պատրիարքարանէ նեռանալով Մանմուա Փաշա գրաժաճառի խանուր մը կը բանայ ուր կ'սկսի ծախել Միւնեոթիսեանի տպած գիրքերը : Արնեստակիցներ կ'զգարին և կը ջանան անոր խանուրը գոցել տալ՝ պաշտօնապէս «վարպետ ելած» ջրլլալը պատրուակ բռնելով . բայց իր պաշտպանին՝ տեղապահ Մաղաքեանի միջամտութեամբ անոնց առաջադրուրիներ ջուրը կ'իյնայ : — Յովսէփ՝ Յ. Մարգարեանի և Պ. Սրապեանի միանալով՝ 1867 ին կազմած է «Ներարք Գրաժաճառութեան» ընկ. մը որ քանի մը տարուան կեանք ունեցած է : — Այն տունուան ընթացիկ դասակիրքերն էին քերական, հեգարան, Սաղմոս, Աետարան, Գործոց ու Նարեկ . ուսանող մը զայնս աարտելէ վերջ՝ շունջը Շուկայ կ'առնէր : Արապեանք, Միւնեոթիսեան, Քիւրքճեան, Տիվիրճեան և Մինասեան մենաշնորհ ըրած էին ատոնց տպագրուրիներ . գրաժաճառք տասանորդով կը գնէին անոնցմէ : Յովսէփ Յ. Մինասեանի նա համաձայնած՝ Յ. Մ. սկզբնատուերով տպել կու տայ աժան



Յ Ո Վ Ս Է Փ Գ Ա Վ Ա Տ Ե Ա Ն Ի
ԵՐԵՎԱՆԱՊԵՏՐՈՒՄԻ

գիրքեր և 12 դրշ.ի ծախուող Սաղմոսը 5 ի կ'իջեցունէ : Այս մըցումը կը գրգռէ հայ տպագրիչները որոնք կը բողոքեն Պատրիարքարան, առարկելով թէ «թ.օր» ի մը տպարանէն կրօնական գիրքեր լոյս կ'ընծայուին՝ իբր Յ. Միւնեոթիսեանի տպագրուրիսն : Գաժաֆեան չժխտորի . բաւական զրամ ծախուելով կ'աջողի արտօնագիր ստանալ և 1860 ի սկիզբները տպարան մը հիմնելով (Քիւրքճի խան, վարի յարկ, թիւ 20 և 26,) աժեն գիրք ազատօրէն տպել և աժան ծախել : — Գրաշար ունեցած է ի մէջ այլոց Աշճեան Սիսակը (այժմ գոհարաժաճառ.) : — Անգամ մը իր գրատունը ոստիկաններ գալով կը խուզարկեն . հայ բազաւորներու պատկերներ կը հաւաքեն, գինքն ալ կ'առաջնորդեն բանտ՝ վեց տպագրիչներու նա որոնք սիկառի բողոքի կախարիչներու վերայ՝ Աետիի, Հալկի, Վարդանի և Տիգրանի պատկերները դրոշմած էին : Տուգանք վճարելով՝ բոլորն ալ ազատ կ'արձակուին քանի մը շաբաթէն, իրենց փաստաբաններուն շնորհիւ՝ որոնք գործին լոկ շահադիտական նպատակը պարզած էին : — Գարձեալ, որ մը Ներսէս Պատրիարք տպագրութեան համար՝ Սանմանադրութեան տետրին ֆրանսերէնը կը յանձնէ Գաժաֆեանի : Կրք. Նիսրը. Քեամիլ Բաշա ձեռագիրը քննութեան կ'ենթարկէ, բայց մէջը վնասակար ոչինչ գտնելով կ'արտօնէ տպագրուրիներ : Այլ միջոցներուն, հայ տպարաններու գործերը յանձնուած էր Սարաֆեան Յարութիւնի (*) որուն պաշտօնը ձեռք ձգելու բաղձացող Միք. Աշճեան ջուշանար տպուած օրինակ մը քննելով 2 բառեր մատանիշ ընելու եղարքոս Քիւրքիկ Սալիս Բաշայի . — (Պատրիարքական) գահ և Բօնարիքիսիօնէլ :



Յ Ո Վ Ս Է Փ Գ Ա Վ Ա Տ Ե Ա Ն

(*) Իրմ գահ, զանազան ժամանակներու մէջ՝ մայրապալախ հայ գրահնչիները եղած են — գիրքի ու բերքի — ՚ Յակոբ Տիվիրեան, Միխայէլ Ասենան, ՚ Պօղոս Պառնասեան, ՚ Միհաս Պուրուսեղեան (Կամար), Երուսակ Նուսուէեան, Լեւոն Սուրէնեան և Երուսակ Վարձապէսեան (օգնական) : — Հայ գիրքերու վրայ դուրմիւրսի Հրամանա Մէլարիժի սարագը 1882ին սկսած է ստանեակ մք սարի շարունակուած է, յետոյ Տպագր. Տեսչութեան կողմէ տրուած հրամանագիրին, բուանամարին և ամաթիւին թրփատա սարագով՝ մինչև 1908 :